

Հավելված  
ՀՀ կառավարության 2009 թվականի  
հուլիսի 16 -ի N 842 - Ն որոշման

«Հավելված  
ՀՀ կառավարության 2004 թվականի  
ապրիլի 8-ի N 514-Ն որոշման

## Կ Ա Ր Գ

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇ  
ՎԵՐՑՆԵԼՈՒ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է բուսասանիտարական զննման կամ բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու կարգը:

### II. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

1) **բեռնաբաժին**՝ ցանկացած քանակի միատեսակ արտադրանք, որը նախատեսված է միաժամանակյա ընդունման և բարձման համար կամ պահպանվում է նույն պահեստարանում.

2) **կետային նմուշ, կետային նմուշառում**՝ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ոչ մեծ քանակություն, որը բեռնաբաժնից վերցվել է մեկ գործողության՝ միացյալ նմուշի ձևավորման համար.

3) **միացյալ նմուշ**՝ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների բեռնաբաժնից վերցված կետային նմուշների ամբողջություն.

4) **միջին նմուշ**՝ միացյալ նմուշի մաս, որն առանձնացվում է լաբորատոր փորձաքննության համար.

5) **հսկիչ նմուշ**՝ կարանտին վնասակար օրգանիզմների կողմից վնասված բույսերի մասեր, որոնք վերցվել են բուսասանիտարական զննման կամ բուսասանիտարական փորձաքննության նպատակով, և որոնք բնութագրում են բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների բուսասանիտարական վիճակը:

### III. ՍԵՐՄՆԱՆՅՈՒԹԻՑ ՆՍՈՒՇԱՌՈՒՄԸ

3. Սերմնանյութի կետային նմուշառում կատարվում է յուրաքանչյուր բեռնաբաժնից՝

1) խոշորասերմ մշակաբույսերի յուրաքանչյուր կետային նմուշի կշիռը պետք է կազմի **150-200** գ.

2) մանրասերմ մշակաբույսերի յուրաքանչյուր կետային նմուշի կշիռը պետք է կազմի **10-30** գ:

4. Առանց տարայի փոխադրվող, բեռնվող, բեռնաթափվող և պահպանվող սերմնանյութից կետային նմուշառումը կատարվում է՝

1) փոխադրվող սերմնանյութից՝ անմիջապես փոխադրամիջոցում, **3** կետից: Յուրաքանչյուր կետում կետային նմուշները վերցվում են **3** շերտից, կամ՝

2) բեռնման կամ բեռնաթափման ժամանակ՝ փոխադրիչի թափվող շիթից, հատուկ շերեփի միջոցով, շիթը հատելով ամբողջ լայնքով, հավասար ժամանակահատվածներում, բարձված յուրաքանչյուր տոննայի հաշվով **30-50** գրամի չափով, կամ՝

3) պահեստներում պահպանվող սերմնանյութի նմուշառման համար սերմնանյութի զբաղեցրած մակերեսը բաժանվում է մոտավորապես **20** քառ.մետր հատվածների և յուրաքանչյուր հատվածից վերցվում է **3** կետից և **3** շերտից: Եզիպտացորենի կողրերից նմուշառումը կատարվում է նույն կարգով՝ յուրաքանչյուր շերտից մեկական կողր:

5. Տարայով պահպանվող կամ փոխադրվող սերմնանյութի կետային նմուշառումը կատարվում է՝

- 1) մինչև 25 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր 5-րդ տարայից՝ 3 շերտից.
- 2) 26-100 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր քսանհինգերորդ տարայից՝ 3 շերտից.
- 3) 101-500 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ տարայից՝ 3 շերտից.
- 4) 501-1000 տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ տարայից՝ 3 շերտից.
- 5) 1000-ից ավելի տարայի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ տարայից՝

3 շերտից:

6. Կետային նմուշառումը կատարվում է մատչելի տեղերում գտնվող տարաներից:

7. Փոքրածավալ փաթեթավորված (մինչև 3 կգ) սերմնանյութի դեպքում զննվում է փաթեթի ամբողջ պարունակությունը: Ձևավող փաթեթների քանակը կախված է բեռնաբաժնի մեծությունից՝

- 1) մինչև 25 փաթեթի դեպքում՝ զննվում է ընտրանքային կարգով մեկ փաթեթ.
- 2) 26-100 փաթեթի դեպքում՝ զննվում է յուրաքանչյուր քսանհինգերորդ փաթեթը.
- 3) 101-500 փաթեթի դեպքում՝ զննվում է յուրաքանչյուր հիսուներորդ փաթեթը.
- 4) 500-ից ավելի փաթեթի դեպքում՝ զննվում է յուրաքանչյուր հարյուրերորդ փաթեթը:

#### IV. ՏՆԿԱՆՅՈՒԹԻՑ ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ

8. Կախված տնկանյութի (տնկիներ, կտրոններ, մացառներ, արմատակալներ) բեռնաբաժնի մեծությունից՝ որպես նմուշ վերցվում է՝

- 1) մինչև 50 հատ տնկանյութի դեպքում՝ յուրաքանչյուր հինգերորդ տնկանյութը.
- 2) 51-500 հատ տնկանյութի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ տնկանյութը.
- 3) 501-3000 հատ տնկանյութի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ տնկանյութը.

4) **3001-10000** հատ տնկանյութի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ տնկանյութը:

5) **10000**-ից ավելի տնկանյութի դեպքում՝ յուրաքանչյուր հինգհարյուրերորդ տնկանյութը:

9. Տարավորված պալարների, արմատապտուղների և սոխուկների տնկանյութից (սերմնանյութ) կետային նմուշներ վերցվում են տարայի ամբողջ խորությամբ՝ յուրաքանչյուրից **3-5** հատ: Կետային նմուշառում կատարվում է՝

1) մինչև **25** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր **5**-րդ տարայից՝ **3** շերտից:

2) **26-100** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր քսանհինգերորդ տարայից՝ **3** շերտից:

3) **101-500** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ տարայից՝ **3** շերտից:

4) **500-1000** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ տարայից՝ **3** շերտից:

5) **1000**-ից ավելի տարայի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ տարայից՝ **3** շերտից:

10. Կետային նմուշառումը կատարվում է մատչելի տեղերում գտնվող տարաներից:

11. Առանց տարայի պահպանվող կամ փոխադրվող կամ բեռնվող կամ բեռնաթափվող սոխուկներից, պալարներից արմատապտուղներից կետային նմուշառում կատարվում է՝

1) պահպանման վայրում մակերեսը բաժանվում է **20** քառ.մետր հատվածների և յուրաքանչյուր հատվածից կետային նմուշ վերցվում է երեք կետից՝ երկու շերտից, **3-5** հատ:

2) փոխադրամիջոցում կետային նմուշ վերցվում է **3-5** կետից՝ երկու շերտից, **3-5** հատ:

3) բեռնման կամ բեռնաթափման ժամանակ վերցվում է **3** կետային նմուշ, հավասարաչափ ժամանակահատվածում՝ **3-5** հատ:

12. Փորձաքննության համար վերցվում է նաև սոխուկներից, պալարներից, արմատապտուղներից թափված հողը (հողի ավլուկը)՝ **3** կետից՝ **200**-ական գրամի չափով:

**V. ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻՑ  
ՆՍՈՒՇԱՌՈՒՄԸ**

**13.** Առանց տարայի կամ պահպանվող կամ փոխադրվող կամ բեռնվող կամ բեռնաթափվող պարենային և տեխնիկական նշանակության յուրաքանչյուր տեսակի արտադրանքից կետային նմուշառում կատարվում է՝

1) փոխադրամիջոցում՝ յուրաքանչյուր փոխադրամիջոցի **1-3** կետից, **2** շերտից.

2) պահպանման ժամանակ՝ յուրաքանչյուր **50** քառ.մետր, **3** կետից, **2** շերտից.

3) բեռնման կամ բեռնաթափման ժամանակ՝ **3** կետային նմուշ, հավասարաչափ ժամանակահատվածում:

**14.** Տարավորված պարենային և տեխնիկական նշանակության արտադրանքից կետային նմուշառում կատարվում է՝

1) մինչև **50** տարայի դեպքում՝ ընտրանքային կարգով՝ **2** տարայից՝ **2** շերտից.

2) **51-100** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր քսանհինգերորդ տարայից՝ **2** շերտից.

3) **101-500** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ տարայից՝ **2** շերտից.

4) **500-1000** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ տարայից՝ **2** շերտից.

5) **1000**-ից ավելի տարայի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ տարայից՝

**2** շերտից:

**15.** Բանջարեղենից և պտուղներից կետային նմուշառում կատարվում է՝ ելնելով տարաների քանակից՝

1) մինչև **50** տարայի դեպքում՝ ընտրանքային կարգով՝ **2** տարայից՝ **2** շերտից.

2) **51-100** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր քսանհինգերորդ տարայից՝ **2** շերտից.

3) **101-500** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ տարայից՝ **2** շերտից.

4) **501-1000** տարայի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ տարայից՝ **2** շերտից.

5) **1000**-ից ավելի տարայի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ տարայից՝

**2** շերտից:

**16.** Յուրաքանչյուր կետային նմուշ պետք է կազմի **3-5** պալար, պտուղ, սոխուկ, արմատապտուղ, այլ մթերքներից՝ **100-200** գ:

**17.** Կտրված ծաղիկներից, ճյուղերից և կանաչ բույսերից (այսուհետ՝ բույսեր) կետային նմուշառման համար վերցվում է՝

- 1) մինչև **100** բույսի դեպքում՝ ընտրանքային կարգով՝ **5** բույս.
- 2) **101-500** բույսի դեպքում՝ յուրաքանչյուր հիսուներորդ բույսը.
- 3) **501-3000** բույսի դեպքում՝ յուրաքանչյուր հարյուրերորդ բույսը.
- 4) **3001-10000** բույսի դեպքում՝ յուրաքանչյուր երկուհարյուրերորդ բույսը.
- 5) **10000**-ից ավելի բույսի դեպքում՝ յուրաքանչյուր հինգհարյուրերորդ բույսը:

**18.** Սերմնանյութից, տնկանյութից, պարենային և տեխնիկական նշանակության արտադրանքից կետային նմուշառման նվազագույն շեմը պարտադիր կատարվում է՝ անկախ բեռնաբաժնի քանակությունից:

## VI. ԵԼԱՆՅՈՒԹԻ ԿԱԶՄՈՒՄԸ

**19.** Բեռնաբաժնից վերցված կետային նմուշների համասեռությունը որոշելու նպատակով դրանք մանրակրկիտ զննվում են: Բոլոր համասեռ կետային նմուշները դատարկվում են մաքուր, հարթ մակերեսի վրա, կազմվում է միջին նմուշ և զննվում վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով: Ջնման ժամանակ հայտնաբերված վնասակար օրգանիզմները (կենդանի կամ մեռած), ինչպես նաև հիվանդ, վնասված սերմերը և բույսերի մասերն առանձնացվում են փորձանոթներում կամ մովլաթե տոպրակներում, պիտակավորվում և կցվում միջին նմուշին:

**20.** Եթե կետային նմուշների զննման ընթացքում նկատվում են ակնհայտ տարբերություններ, ապա կատարվում է կրկնակի կետային նմուշառում, ընդ որում, յուրաքանչյուր

կետային նմուշ տեղում զննվում է բեռնաբաժնի յուրաքանչյուր համասեռ բեռնամասի տարանջատման և տվյալ բեռնամասի համար առանձին միացյալ նմուշ կազմելու նպատակով:

## VII. ՄԻՋԻՆ ՆՄՈՒՇԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ

21. Բուսասանիտարական զննում անցկացնելու նպատակով բույսերից և բուսական արտադրանքից միջին նմուշները վերցվում են սույն կարգի ձևում ներկայացված չափաքանակներով:

22. Թարմ պտուղներից և բանջարեղենից միջին նմուշը հիմնականում կազմվում է վնասակար օրգանիզմների հարուցիչներից վնասված նմուշներից: Սոխուկների, պալարների, արմատապտուղների միջին նմուշներում պարտադիր ներառվում է նաև դրանցից թափված հողը:

23. Միջին նմուշն առանձնացնելուց հետո պետական տեսուչը բեռի տիրոջ կամ նրա ներկայացուցչի և մաքսային ծառայողի ներկայությամբ կազմում է նմուշառման ակտ:

24. Նմուշի մնացորդները վերադարձվում են բեռի տիրոջը:

## VIII. ՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

25. Վերցված միջին նմուշները, որոնցում հայտնաբերվել են կարանտին վնասակար օրգանիզմներ, վարակազերծվում են, առնվազն 3 ամիս պահպանվում սահմանային հսկիչ կետում կամ լաբորատորիայում, որից հետո հանվում են հաշվառումից և ոչնչացվում:

26. Վերցված միջին նմուշը, որում չի հայտնաբերվել կարանտին վնասակար օրգանիզմներ, վերադարձվում է բեռի տիրոջը:

27. Շուտ փչացող մթերքների միջին նմուշները, որոնցում հայտնաբերվել են կարանտին վնասակար օրգանիզմներ, ոչնչացվում են: Տվյալ կարանտին վնասակար օրգանիզմի առավել

բնութագրող նմուշները կարանտին վնասակար օրգանիզմի հետ միասին, որպես հսկիչ նմուշ, պահպանվում են 3 ամիս սահմանային հսկիչ կետում կամ լաբորատորիայում:

28. Նմուշների ոչնչացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի «Վտանգավոր սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի և վտանգավոր սննդային հավելումների օգտահանման և ոչնչացման կարգը սահմանելու մասին» N 824-Ն որոշման համաձայն:

Ձև

NN ը/կ	Բույսերի և բուսական արտադրանքի անվանումը	Չափի միավորը	
		3	4
	<b>1. ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐ (ՍԵՐՄԵՐ ԵՎ ՀԱՏԻԿ)</b>		
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>
1.	Եգիպտացորենի հատիկ	900	գրամ
2.	Եգիպտացորենի կոդր	15	հատ
3.	Ցորեն, աշորա, գարի, վարսակ, բրինձ	600	գրամ
4.	Կորեկ, չումիզա, հնդկացորեն	300	գրամ
5.	Մոզար, սորգո, աֆրիկյան կորեկ	150	գրամ
	<b>2. ԸՆԴԵՂԵՆՆԵՐ</b>		
6.	Ոլոռ, լոբի, ոսպ, տափոլոռ, սոյա, բակլա	600	գրամ
	<b>3. ԴԱՇՏԱՎԼՈՒԿԱԶԳԻ ԵՎ ԲԱԿԼԱԶԳԻ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐ</b>		
7.	Կորնզան, վիկ, լյուպին	600	գրամ
8.	Առվույտ, իշառվույտ, երեքնուկ, սերադելլա, սուդանի խոտ	150	գրամ
9.	Ցորնուկ, անտառային տափոլոռ	100	գրամ
10.	Ոգնախոտ հավաքված, տափաստանային կերասեզ (ժիտնյակ) մարգագետնային շյուղախոտ, ռայգրաս, տիմոֆենկա (սիզախոտ մարգագետնային)	100	գրամ
11.	Դաշտախոտուկ, դաշտավլուկ	50	գրամ
	<b>4. ԲԱՆՋԱՐԱԲՈՍՏԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ</b>		
12.	Վարունգ, դոմիկ, սելի	150	գրամ
13.	Ձմերուկ, դդում	200	գրամ
14.	Ճակնդեղ (սեղանի, շաքարի, կերի)	300	գրամ
15.	Սպանախ, սոխ, կանգկուր	50	գրամ
16.	Սոխուկ, պալար, արմատապտուղ	2000	գրամ
17.	Լոլիկ, սմբուկ, կաղամբ, գագար, սամիթ, գինձ	50	գրամ
	<b>5. ԾԱՂԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐ</b>		
18.	Հնդկոտեմ, ախրիզան, վիկ բուրավետ, ծնեբեկ, ձևավոր	150	գրամ



1	2	3	4
	(գեղագարդային) դդում, արմավ		
19.	Խոշորասերմ՝ նարգիզ, նեմոֆիլա, արջուակ, ցիկլամեն, միամյա գեորգինաներ	50	գրամ
20.	Միջին մեծության սերմեր՝ աստղածաղիկ, թավշածաղիկներ, ազերատում, ալիսում, մեխակ, արևադարձ, շնորհիկ (կլարկիա)	15	գրամ
21.	Մանրասերմ՝ ծխածաղիկ, բեգոնիա, լորեշիա, բուրավետ ծխախոտ 6. ՊՏՂԱՏՈՒ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԹՓԵՐԻ ՍԵՐՄԵՐ	1	գրամ
22.	Խոշորապտուղ՝ ծիրան, դեղձ, սալոր, կաղին, մայրի (կեդր)	300	գրամ
23.	Միջին մեծության սերմեր՝ խնձոր, ցախկեռաս, սզնի	50	գրամ
24.	Մանրասերմ՝ բարդի, հաղարջ, թույր, կենսածառ 7. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅՈՒՂԱՏՈՒ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐ	20	գրամ
25.	Գերչակ (տզկանեփ), արախիս	500	գրամ
26.	Արևածաղիկ, բամբակ, կակաոյի ունդեր, սուրճի հատիկներ	500	գրամ
27.	Կանեփ, վուշ, կանճրակ	200	գրամ
28.	Բամիա, ախտորիկ (բամբակաղբեր)	100	գրամ
29.	Մանանեխ, քունջութ, դաշտակտավատ, պերիլլա, հլածուկ, սորուկ, սև պղպեղ, դարչին	50	գրամ
30.	Գվայուլյա, հնդկանեփ	40	գրամ
31.	Գայլուկ, ճարճատուկ	50	գրամ
32.	Կակաչ, ծխախոտ 8. ԹԱՐՄ ԵՎ ՉՈՐԱՅՐԱԾ ՄՐԳԵՐ	20	գրամ
33.	Ադամաթուզ (բանան), արքայախնձոր (անանաս), նուռ, թուրինջ (գրեյֆրուտ), կիվի, ֆեյխոա, կոկոս	1000	գրամ
34.	Տանձ, խնձոր, դեղձ, կիտրոն, մանդարին	1000	գրամ
35.	Կորիզավորներ՝ ծիրան, սալոր, կեռաս, շլոր	600	գրամ
36.	Խաղող	600	գրամ
37.	Մմբուկ, լոլիկ, վարունգ, դդմիկ, կարտոֆիլ	1000	գրամ
38.	Չմերուկ, սեխ, դդում	5000	գրամ
39.	Չորացրած խառը մրգեր, չամիչ, քիշմիշ	500	գրամ
40.	Ընկուզեղեն՝ տարբեր տեսակի	500	գրամ
41.	Չավարեղեն՝ բրնձի, ցորենի, հնդկացորենի, վարսակի, կորեկի և ընդեղենների	600	գրամ
42.	Թեյ	200	գրամ
43.	Ալյուր	300	գրամ
44.	Հողի ավլուկ	200	գրամ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ